

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:

ՑՈԼԱԿ ԽԱՆՁԱԴՅԱՆ

ԱԼԵԿՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ


ԲՆՈՒՑՔԱԳՐՄԱՆ ՓՈՐՁ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ—1926

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք:



3 կռի (սյառիկան)
Խ-24

ՑՈԼԱԿ ԽԱՆՁԱԴՅԱՆ

ԱԼԵՔՍԱՆԴԻՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

199

ԲՆՈՒՅԹԱԳՐՄԱՆ ՓՈՐՁ

A 11
195561




ՅԵՐԵՎԱՆ—1926


Գրանկար № 368 (բ.)

№ 358

Տիրաժ 5000

Պետհրատի չեղարկումը տպարան պ. 532





ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
1911 թ. 12 ամի 15 օր

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ-ՄԱՐՏՈՒՆԻ (ԱԼՅՈՇԱ)

(Բնույթագրման փորձ)

1886—1925

«Հաստատապես կարող եմ վկայել, վոր ինչպես կամ
այժմ, այնպես ել պիտի մեռնեմ», — գրում եր Ալեքսանդր
Մյասնիկյանը 1908 թվականին:

Յեվ նրա գաղափարաշունչ կյանքն ու զարհուրելի
մահվան ցնցող հանգամանքները վկայեցին...

Նոր Նախիջևանի թեմական դպրոցն ավարտելուց հե-
տո նա յեկավ Մոսկվա—1904 թվականին—Լազարյան
ճեմարանը մտնելու նպատակով:

Նույն թվականին ել ծանոթացանք Ալյոշային, վոր
(այն ժամանակ արդեն անվանի) բանաստեղծ Ավետիք Իսա-
հակյանի նման բարեկամ հովանավորող ուներ:

—Շատ լավ տղա յե, պատրաստված! — խորը համակ-
րանքով ասել եր Ալյոշայի մասին Ավետիք Իսահակյանը:

Բնական ե, վոր ճեմարան մտնելուն պես նա պիտի
աչքի ընկներ և մտներ դպրոցական «մտավորականու-
թյան» շարքերը, վորի գլխավոր առաջնորդներն էին
Վահան Տեր-Գրիգորյանն (Տերյանը) ու իր փայլուն աշ-
խատակից Պողոս Մակինցյանը:

Նոր Նախիջևանից Մյասնիկյանը բերել եր մի աշ-
խարհայացք, վոր միանգամայն ներդաշնակում եր մեր
մեջ իշխող բաղաժառանգ ուղղության:

Իհարկե, ի սկզբանես եր Դաշնակցություն... Նացիո-
նալիստներ էյինք, հարկավ, բայց խիստ յուրորինակ-տա-

ըորինակ յերանգավորուածով, այդ գաղափարի ուրույն ա-
ռուածով: Տաճկահայութեան վիճակը, հայոց հարցը մեր
մտահոգութիւններէ կենտրոնն էյին կազմուած, հայկական
ազատագրական շարժման նպատակները մեր նպատակ-
ներն էյին: Բաժժու և Ահաւրոնյանի վեպերով ու պատ-
մըվածքներով հրահրված մինչ հիստերիայի աստիճանի՝
մենք կարծուած էյինք, թե մեծ նպատակին հասնելու մի-
ակ ուղին Հայ Հեղափոխական Դաշնակցութեան առաջար-
կած ուղին է: Վարդագույն նշանաբաններէ, հայդուկա-
լին հերոսութիւններէ և վառ դրոշակներէ հետևը շէյինք
նկատուած նացիոնալիստական-շովինիստական նեխված ճա-
հիճը: Յերիտասարդական լավատես յերևակայութեամբ գու-
նավորուած էյինք հայկական ազատագրական շարժումն ու
նրա գլխավոր դրոշակակիր Հ. Հ. Դաշնակցութիւնը:

Հավատուած էյինք, վոր այդ կուսակցութիւնը 1905
թվականից հարել է սոցիալիստական բանակին և յեթե
իր մեջ ունի անհստակատ տարրեր, հակասոցիալիստական
խավեր, ապա գոման ու բյուրեղացման հետևանքով դը-
րանք կվտարվեն, ու կուսակցութիւնը կընդունի իր անա-
ղարտ սոցիալիստական կերպը: Յեվ յերագուած էյինք վերա-
նորոգել կուսակցութիւնը նարոյնիկական սոցիալիզմի
միջոցով: Ռուս սոցիալիստ գրողներէ միջազգայնականու-
թեան գաղափարներով սնված՝ մենք 1904 թվականից
հզորապես ազդվել սկսեցինք պրոլետարիատի իդէոլոգի-
այից և հեղափոխական շարժումներէ: 1905 թվականին
մենք պարզորոշ կերպով ըմբռնել էյինք կապիտալիստա-
կան հասարակարգի կառուցվածքն ու դասակարգային
ներհակութիւններէ, կռիվներէ նշանակութիւնը: Յեվ յե-
թե առաջ մեր «սոցիալիզմը» սնվուած էր գլխավորապես
Բեյինսկու, Պիսարևի և այլ սոցիալիստ-լուսավորիչներէ
գրվածքներով, այժմ մենք արդեն մոտեցել էյինք գիտա-
կան սոցիալիզմի հիմնական աղբններին, արդեն վորոշ

չափով գիտեցինք Մարքսին, Ենգելսին, Լասսալին և նրանց աշակերտներին: Քիչ, բայց գիտեցինք:

Այսպիսով մի կողմից — Րաֆֆի և Ահարոնյան, մյուս կողմից — Բեյլինսկի և Մարքս:

Յեվ բնական եր թվում, վոր ուս գրականության ու հեղափոխության ներշնչած աշխատավորական գաղափարները հայ ժողովրդի կյանքում պետք է կիրառի «սոցիալիստական» Հ. Հ. Դաշնակցությունը:

Դա մի անհուսալի փորձ եր հաշտեցնելու ըստ եյության անհաշտելի տարրերը, կառուցանելու կլոր քառակուսի, ստեղծելու մի վարդապետություն, վոր պետք է լիներ նացիոնալիստական սոցիալիզմ կամ... սոցիալիստական նացիոնալիզմ:

Մի անհեթեթություն, վորի հակասականությունը շուտով պետք է զգայինք ու յելք փնտռեցինք:

Ձևականորեն միայն Մյաննիկյանն եր դաշնակցական: Մյուսներս իդեոլոգիապես համարելով մեզ դաշնակցական (հաճախ անվանում եյինք մեզ «յերիտասարդ դաշնակցականներ»), գործի չեյինք անցել, պաշտոնապես չեյինք «ձևակերպվել»:

Այդպիսի խիստ հետաքրքրական փորձ արեցին Վահան Տերյանն ու Պողոս Մակինցյանը: 1905 թվականի դեկտեմբերին նրանք կովկաս յեկան ու Թիֆլիզում «քննություն» տալուց հետո (Թամամշևի քարվանսարայի խուլ անկյուններից մեկում), գրկսրաց ընդունվեցին դաշնակցական պրոպագանդիստներ և ուղեվորվեցին Շիրակի շրջանը: Իրոք միայն Մակինցյանը կարգաց իր փորձնական դասախոսությունը և ուղղակի շմեցուցիչ տպավորություն թողեց քննողի և ունկնդիրների վրա... իր ահագին երուզիցիայով. նա այդ ժամանակ վոչ միայն մի քանի հայտնի բրոշյուրներ եր կարդացել, այլ և... պրոֆեսսոր Ա. Չուպրովի «Քաղաքատուն-

տեսութիւնն: Առասպելական բաներ ելին պատմում Տեր-
յանն ու Մակինցյանը դաշնակցական նույնիսկ լիդեր-
ների ծովածավալ տգիտութեան մասին սոցիալական
գիտութիւնների նկատմամբ. որինակ, մի համալսարանա-
վարտ լիդեր մտերմական հարց եր տվել «գիտնական»
պրոպագանդիստներին.

— Ասացեք խնդրեմ, ի՞նչ ե սոցիալիզմը:

Տերյանն ու Մակինցյանը վճռականորեն հաստատում
եյին այդ լեդերութիւնը: Իսկ դաշնակցական մասամբ:
Նա միշտ լսել եր սոցիալիստ-դավաճանների մասին ու
հրեշներ համարել նրանց: Բնականաբար, նորաթուխ դաշ-
նակցականները շուտով պետք ե համոզվելին, համարյա
իրենց կաշվի վրա, ծեծի անվերջ սպառնալիքների
տակ, վոր Դաշնակցութիւնը զտելու, բյուրեղացնելու, վե-
րանորոգելու, «սոցիալիզացիայի» լենթարկելու փորձը բա-
վականին վտանգավոր և միանգամայն ապարդիւն մի գործ ե:

Գաղափարային ճգնաժամն անխուսափելի յեր՝ կյան-
քի փորձի կուտակումն ու թեորիական խորացումը սո-
ցիալական խնդիրների ուսումնասիրութեան զավառում
պետք ե վճռելին խնդիրը, լուծելին ճգնաժամը: Յեւ 1906
թվականի ընթացքում մեր խումբը—մեկն ավելի վաղ,
մյուսը մի փոքր ուշ—թողեց Դաշնակցութեան կազմակեր-
պութիւնն ու իդեոլոգիան և մտավ սոցիալ-դեմոկրատի-
այի շարքերը:

Այ. Մյասնիկյանը 1906 թվականի ամռան «ազատա-
զրվեց» վերջնականապես ազգայնական իդեոլոգիայից և
թողեց Հ. Հ. Դաշնակցութիւնը: Նա անդամագրվեց Սո-
ցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպու-
թեան, բայց այդ հանգամանքն, իհարկե, չեր կարող ար-
գելք հանդիսանալ Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական
Բանվորական կուսակցութեան մեջ ևս աշխատելու. նա հետա-

գայում անդամ եր նաև Ռուսաստանի ս.-դ. բանվորական կուսակցութիան. և սկզբից ևեթ նրա համակրանքը ուսական մարքսիզմի այն հոսանքի կողմն եր, վորի առաջնորդ հանդիսանում եր Վ. Ի. Լենինը:

Հիշում եմ նրա հեզնական վերաբերմունքը դեպի իմ «վիրասիրությունը»:

— Քո վրացիները... ասում եր նա ժպտալով. խոսքը Ծերեթեյուլ և Ջափարիձեյի (մենշևիկ) մասին եր, յերբ նրանք հերոսական պայքար ելին մղում ստալինյան ռեժիմի դեմ 2-րդ Պետական Գումայում:

Յես խորապես վրդովվում եյի, վոր Մյանսիկյանը, իր հակամենշևիկական անհամբերողությունից կուրացած, չի տեսնում այն մեծ զործը, վոր կատարում են վրաց մենշևիկները: Այնքան ուժեղ եր նրա մեջ ֆրակցիոնական վոզին: Այդպես եր արդյոք:

Վոչ նա, վոչ ել յես այն ժամանակ չեյինք կարող յերևակայել, իհարկե, վոր հետագայում վրաց մենշևիկները պետք ե հասնեն այնպիսի անարգ անկման...

Խիստ ինքնավստահ հավատ ուներ դեպի իր ճշմարտությունը: Հենց արտաքինի մեջ կար ինչ վոր վճռական հանգստավետություն, ապացույց, վոր այդ մարդը հեշտ բեկվողներից չեր:

Մի կողմից՝ կխաագանգուր, գեղեցիկ, սև մազերի շքշանակում ամուր նստած, արտահայտիչ աչքերը, խիստ յեզերագծված շրթունքները, վորոնցից ներքինը աֆրիկացի եր հիշեցնում և հռոմեական համառ ծնոտը, մյուս կողմից՝ թեև վոչ խոշոր, բայց ամուր կառուցված մարմինը, ընդհանուր առմամբ թողնում եյին հաստատուն, լավ կոփված շենքի տպավորություն. եմոցիոնալ շարժումների բացակայությունը, ատելությունը դեպի ճոռոտ ֆրագը, հանդիսա քայլվածքը. խոսելու պարզությունը, ինքնազսպության մեծ կարողությունը դարձնում եյին նրան այնպիսի

բնավորութիւնն, վորի մասին մեր ժողովուրդն ասում է՝
— Ծով է, ծով...

Սակայն դա մի ծով էր, չոր իր հատակում «փրփուր-
ներ» ուներ, թեև հազվագեղ պարագաներում էր ցույց
տալիս նրանց։

Իր կյանքի գաղափարային լծակը — մարքսիզմը — նա
ձեռք բերեց 1906 թվականին, — և անշեղ կերպով, աննա-
հանջ լարումով մղվեց դեպի իր իդեալը, յերբեք չվարա-
նելով։

Դժվար էր գտնել մի մարդ, վոր Մյասնիկյանի նման
պարզորեն գիտակցեր, անվերապահորեն գիտենար, թե
ո՞ւր է գնում։

Նա գիտեր ինչ էր կամենում։

Նրա համար միանգամայն ոտարախորթ էին մտքի
նկրաստենիական դեգերումները, հոգեկան հակասութիւն-
ների, ներհակ ապրումների վողբերգութիւնը։

Նա սկզբից և եթ գիտեր՝

— Այսոր կա մի հանցանք — արդի հասարակարգը
(«Մշակ, 1914, № 54 «Հասարակական խոցը»)

և այդ հանցանքը հաղթահարելու միջոցը — կոմմունիզմը։
Իրավաբան էր, բայց գիտեր «որենքները չեն, վոր բու-
ժելու են մարդկության վերքերը. նրանք սպասում են
վիրահատի սուր ու համարձակ դանակին»։

Նա այդ գիտեր որհասական վճռականութիւնով՝ քայ-
քայիչ տարակուսանքները յերբեք տեղ չգտան նրա հո-
գում։ «Հանցանքը» պարզ էր, միջոցը նրա դեմ — ակներև.
Ել ի՞նչ տարակույս, ի՞նչ վորոնում, ի՞նչ վարանում...

Իհարկե, առանց հոգեկան պայքարի չէր, վոր նա
թողեց նացիոնալիստական համոզմունքները (դա ցավոտ
և համառ պրոցեսս էր, և Մյասնիկյանը խորապես ապ-
րեց իր մարքսիստական դարձը), բայց դա նրա առաջին
և վերջին հոգեկան պայքարն էր։

Այլ Մյասնիկյանը միանգամայն կազմ ու պատրաստ դուրս յեկավ պրոլետարական պայքարի ուղին, աշխարհայայցքի տեսակետից կատարելապես սպառազեն և յերբեք տուրք չտվեց ինտելիգենտական հիվանդագին «սլտրուսներին»:

Վորդեզրվելով մարքսիզմին, նա վճռական անվերապահությամբ, առանց վորեւե առարկության ընդունեց նրա բոլոր գրությունները և իսկույն գործի անցավ: Գործ և վոչ թեֆլեկսիա. իբրև հոգեբանական տիպ նա գերազանցապես հակափիլիսոփայական էր: Ամենալուրջ ուսումնասիրությամբ ծանոթանալով մարքսիզմին, նա գրեթե բոլորովին անտարբեր էր դեպի այդ վարդապետության փիլիսոփայական կողմը: Յեվ անվերապահորեն կարելի չէ պնդել, վոր մարքսիզմը նրա համար գրեթե բացառապես քաղաքատնտեսություն էր, կոմմունիստական-սոցիալական ուսմունք և կազմակերպչական-տակտիկական խնդիր (սակայն, պետք է շեշտվի, նա, իհարկե, քաջ ծանոթ էր մարքսիզմի փիլիսոփայությանը ևս): Յես շգիտեմ մեր անվանի մարքսիստների մեջ մեկը, վոր Մյասնիկյանի նման անտեսած լիներ փիլիսոփայության պրոբլեմները: Կյանքի հակասական առեղծվածները գոյություն շունեյին ամենեվին՝ նա իր գիտակցված գործն ուներ և իր ամբողջ յեռանդը, ամբողջ կյանքը անձնանվեր պատրաստակամությամբ ի սպաս էր դնում նրան: Բնականաբար, յերբեմն հակված էր կյանքի բազմաբարդ յերևույթները պարզացման յենթարկելու, չնշտարելով նրբությունները:

Հավատարիմ, անդավաճան ընկեր լինելով, նա զամանալի կերպով զուրկ էր վորևե սենտիմենտալիզմից և իր ամբողջ եյությամբ դեմ էր ճոռոմ բարոյախոսության: Ժուժկալ էր, ժլատ իր զգացմունքների արտահայտության մեջ. կարծես խուսափում էր «դատարկ» բաների վրա իր յեռանդը վատնելուց, պահպանելով այդ յեռանդը իր կյան-

քի միակ նպատակի համար: Չարմանալի կազմակերպված հոգեկան տնտեսություն ուներ, անորինակ համակարգված բնավորություն եր՝ իր ամբողջ կորովը պահպանում եր իր գործի համար:

Վորովհետև պարզ եր նրա համար աշխարհը, բացահայտ՝ մարդկային կյանքի նպատակակետը:

Այս «սխտեմի» շնորհիվ նա կարողացավ անզուգականորեն բանական ձևով ոգտագործել իր ուժերը. Մյասնիկյանը, կարելի յե ասել, դրսևորեց իր հոգեկան կարողությունների գրեթե ամբողջ թափը:

Վորովհետև նա անդառնալի կերպով գիտեր ինչ եր կամենում:

Այս տեսակետից Մյասնիկյանի հոգեբանական հակոտնյան եր բանաստեղծ Վահան Տերչյանը, վոր վոչ միայն ծայրահեղ զգայունությամբ եր ոժտված, այլ և մտքի փիլիսոփայական արտահայտված թեքում ուներ. ավելի անուրջի մարդ, քան թե իրական կյանքի՝ վորոնող վոգի, գրեթե ցավագարության հասնող նուրբ նյարդային սխտեմ...

Մինչդեռ Մյասնիկյանի համար ամեն ինչ պարզ եր, — Վահան Տերչյանը, ընդհակառակը, պատկանելով նույն մարքսիստական սոցիալ դեմոկրատական կուսակցության, կարծում եր, վոր դեռ ևս աշխարհումս շատ գաղտնիքներ կան, վորոնց մասին իմաստունները չեն ել յերազել անգամ... Յեվ սիրում եր հուզիչ ձայնով կրկնել հետևյալ (յեթե չեմ սխալվում, Ֆր. Նիցշեի Չարատուևտրալի) խոսքերը՝

— Ի՞նչ գիտե մարդը, ի՞նչ գիտե մարդը...

Յեվ ամենուրեք՝ բնության մեջ, սոցիալական կյանքում, իր հոգու մեջ՝ տեսնում եր հարցեր, հարցեր... Բանաստեղծի համար միշտ բնորոշ են յեղել իր այս խոսքերը՝

Չգիտեմ կյանքը ինձ ո՞ւր ե տանում,

Ամեն ինչ հարց ե, մթին հանելուկ...

Յեվ սիրող ընկերները, Մյասնիկյանն ու Տերյանը, հաճախ ընդհարվում եյին, կռվում:

Մեկը՝ նյարդային, հիստերիկ սուր ձայնով, մտահույզ, յերբեմն կոպիտ, անհամբերող, մյուսը՝ հանգիստ, համբերող, ինքնավստահ (բայց յերբեք ինքնահավան կամ մեծամիտ!), գրեթե անտարբեր...

— Կամքի ազատություն և անհրաժեշտություն, ազատության թագավորություն- անհրաժեշտության թագավորություն: Անհատը և պալական անհրաժեշտությունը! Բարոյականությունը, եստետիկան և... դետերմինիզմը, անառարկելի պատճառաբանվածությունը ինչպէս ծայրը ծայրին հասցնել, ինչպէս հաշտեցնել, ինչպէս մեկնաբանել... հարցերը հարցերի հետևից տեղում եյին Մյասնիկյանի գլխին, և նա, ժայռի նման հաստատուն, հաճախ մի պատասխան ուներ այդ բոլոր հարցերին՝

— Մարքսի «Կապիտալը» կարդացել ես, Ենգելսի «Անտի-Դյուրինգը» կարդացել ես: Այնտեղ ամեն ինչ կա, պատասխաններ քո բոլոր հարցերին, պարզաբանումն բոլոր համաշխարհային պրոբլեմներին:

Այս պատասխանը կատաղեցնում եր Տերյանին, վորովհետև սա խոսքը կտուրը քցել եր նշանակում: Յեվ վրդովված շեշտով նա պատասխանում եր՝
մերթ --

— Այո, այո, կարդացել եմ, գիտեմ, այնտեղ պատասխան չկա իմ հարցերին!

մերթ --

— Վոչ, չեմ կարդացել: Այ, դու կարդացել, յուրացրել ես, չե՞. դե, բացատրիր, պարզաբանիր! Ու յերբեմն հարկադրում եր վեճի բռնվել:

Մյասնիկյանը ուղղափառ մարքսիզմի հանրահայտ դրություններով ջանում եր ցրել Տերյանի տարակուսանքները, պարզաբանել մութ կետերը:

Տերյանը, իհարկե, չէր բավարարվում, զայրանում
էր, նյարդաչնորեն յեղունգները կռծում, յերբեմն նույն-
իսկ հայհոյում... Յեվ ընկերները «հաշտվում եյին» թե-
յասեղանի շուրջը, խոսակցության նյութը փոխում, քաղցր
մասլահաթին գոր տալիս, մինչև նոր բաղխում, նոր վիճա-
բանություն, նոր «ճակատամարտ»:

✓ Ամենատեղ վեճը — յերկուսի համար ել խիստ բնո-
րոշ — վերաբերում էր... սիրո խնդրին:

Սիրո յերգիչը շանթահարվածի էր նման: Ինչպե՞ս:
Սիրո դե՞մ... Մյասնիկյանը իր մարքսիստական «որթողոք-
սիան» շատ հեռու էր տարել և ազդարարել՝

— Մարքսիստը չի կարող սիրել կնոջ և ամուսնանալ,
յեթե նա իրոք նվիրված է բանվոր դասակարգի շահին:
Վոչ մի շահ, վոչ մի նպատակ, բացի պրոլետարական շարժ-
ման շահից ու նպատակից!

Սա արդեն սոսկալի չէր. դուրս էր գալիս, վոր մարք-
սիզմը ժխտում է սերը: Սա փորձ էր Տերյանի կյանքից
խլելու նրա ամենամեծ իմաստներից մեկը: Ու «հրաշք—
աղջկա» յերգիչը իր հոգու ամբողջ թափով ծառայեցավ այդ
անսպասելի վտանգի դեմ.

— Ինչպե՞ս կարելի յե առանց կնոջ, առանց սիրո!
Ինչպե՞ս կարող է մարքսիզմը ժխտել սերը: Չի կարող մի
կենսունակ վարդապետություն այդպիսի պահանջ դնել
մարդու առաջ:

Ու վորովհետև Մյասնիկյանի նման տրամաբանել չը-
գիտեր, փաստաբանել չէր կարողանում — վեճը ձևա-
կանորեն ըստ յերևույթին տանուլ էր տվել! Բայց
կարող էր հանգիստ գտնել: Նրա աչքերը պայծառա-
ցան հաղթական փայլից, յերբ իմացավ (վեճի ժամա-
նակ չգիտեր), վոր կարլ Մարքսը պաշտելու չափ սի-
րել է իր կնոջը — յերկար տարիներ — և ջահել ժամանակ
նույնիսկ վոտանավորներ է նվիրել նրան (իհարկե, սիրա-

յին)։ Յեւ Մարքսի առաջ միայն ընկրկեց Մյասնիկյանը։
Նա կյանքի վորոշ փորձ ևս ուներ, վորի մասին հիշատակումներ կան նրա նամակներում։ Սիրո դյուլթանքը նրան ել ե գերել ժամանակավորապես։

1908 թվականին նա իր նամակներում ակնարկում ե այդ մասին.

Հունիսի 11-ին՝ «Իմ դրուլթյունս*» շան դրուլթյուն ե ուղղակի, վոչ փող, վոչ սենյակ, վոչ ինչ. թափառում եմ շարունակ, սակայն ամեն որ ել կանոնավոր կերպով հաճախում եմ ըայոնները՝ մեր թեորիան այստեղ չի կիրաււում արդեն. ըստ տնտեսական դրուլթյան չե, վոր յես այժմ կարողանում եմ աշխատել։ Սակայն ներսումս կատարյալ մի տրագեդիա յե տեղի ունենում—սուբիեկտիւ և սուբիեկտիւ աշխարհներս տարուբերում են. յես շատ բան քեզ չեյի պատմում, քանզի հնարավորուլթյուն չունեյի։ Կխոսենք հետո։ Գրիր ստեպ ստեպ, Վահանը այդտեղ ե. ջերմագին բարևներս ուղղիր իրան, ասա թող գրի անպատճառ. գիրքը յե՛րք ե լույս տեսնելու. սպասում եմ և ենք անհամբեր»։

Հետևյալ որը (հունիսի 12-ին)՝ «յես գտնւում եմ անտանելի դրուլթյան մեջ. ներքինս փոթորկւած. չեմ իմանում, թե կմնամ արդյոք Բաքւում, վորովհետև չեմ կարող տանել»։

Ոգոստոսի 20-ին ուղարկւած նամակում այսպիսի ուժեղ տողեր կան՝ «ГОМЕЛБ-ГОМЕЛБ-ը**») սաստիկ շարշարում ե ինձ. ուղղակի մեռնում եմ, Յոլակ ջան». և հետո՝ «տրամադրուլթյունս դժոխային ե»։ Այդ ապրումների ազդեցուլթյան տակ եր անշուշտ, վոր Վահան Տերյանի տողերից ցնցւած արտասւլել եր այդ ամուր մարդը՝

*) Ուղղագրուլթյունը փոփոխւած ե բոլոր մեջբերումների մեջ։

***) Որիորդը հրեուհի եր, և մենք բարի կատակով այդ անեղդոտային անունն եյինք տվել նրան։

Դու անհոգ նայեցիր իմ վրա
 Ու անցար քո խաղով կանացի.
 Յես քեզնից դառնացած հեռացա,
 Յես քեզնից հեռացա ու լացի:
 Սակայն սա սոսկ միջադեպ էր նրա կյանքում: Կոմ-
 մունիզմի իշխանությունը այնքան զորեղ էր նրա հոգում,
 վոր վոչ մի սիրային տրագեդիա չէր կարող թուլացնել
 նրա ձգտումը: Մյասնիկյանը հետազայում ամուսնացավ,
 չերեխա ել ունեցավ, բայց չերբեք ամուսինն ու հայրը մի
 մազաչափ անգամ չփոխեցին հասարակական գործչի վար-
 քագիծը, չթուլացրին կոմմունիզմի պաթոսը նրա մեջ: Այդ
 տեսակետից բնորոշ է հետևյալ հետաքրքրական նամակը,
 վոր բերում եմ ամբողջովին. նա գրված է հիշատակված
 սիրային տրագեդիայի որերում:

908²⁰ / VI

Ոնիկից*) ինչ խաբար

Բաքու

Սիրելի Յուլա !


Ստացա նամակդ. կարծում ես, վոր կարող են վորոշ
 տատանումներ առաջ յեկած լինել իմ ուղեղում քաղաքա-
 կան հարցերի, իմ քաղաքական դավանանքի նկատմամբ.
 չեմ հասկանում, թե ինչը դրդել է քեզ այդ տեսակ յեն-
 թադրության դուռը բաց անել: Անշուշտ, սխալված ես:
 Հաստատապես կարող եմ վկայել, վոր ինչպես կամ այժմ,
 այնպես ել պիտի մեռնեմ. գործը այնպես է վոզևորել
 ինձ և մարմին ու արյուն դարձել իմ մեջ, վոր վոչ մի տա-
 տանում չի կարող խախտել վոչինչ ու վոչինչ ! Հարցը վե-
 րաբերում է մեր ներկա դրության: Անշուշտ քեզ համար
 նորություն կլինի, յեթե հայտնեմ, վոր ներկայումս, գոնե
 Բաքվում գոյություն չունի հայ սոցիալ-դեմոկրատիա:
 Բանվորական մասսաները հասած են անբարոյականության
 ամենածայր չափին, ինտելլիգենցիան միանգամայն կրի-

*) Խոսքը Ոնիկ Ռհանջանյանի մասին է:

զիսի յենթարկված, Ֆինանսներ՝ վոչ մի կոպեկ, Կ. Կ. վոչ-
ինչ չի շինուած, և յերբ ուզուած ես մի գործ կատարել, ա-
մեն կողմից հուսահատ և նույն իսկ քեզ նախատող շշուկ-
ներ ես լսում. — այ՛ մարդ, ի՞նչ գործ, ի՞նչ բան, չարժե աշ-
խատել, վոչինչ դուրս չի գա: Քիչ թե շատ աչքի ըն լնող,
լավագուշն ույժերն ել թողել հեռացել են քաղաքիցս:
Մտիր իմ դրուժյունը. յես վոր այնքան հույսերով ու
ծրագիրներով այստեղ եյի գալիս, այսոր մենակ գտնվում
եմ դժնդակ պայմաններում: Ահա այն իշաքարը, վոր ծան-
րացած ե իմ զլխին. մյուս կողմից, վոր յերկրորդականն
ե, իմ ներքին—սուբիեկտիվ աշխարհը ալեկոծվում եր.
վերջինս իհարկե՛ վոչինչ:

Ահա այն պատճառները, վոր ինձ դրել եյին անելա-
նելի դրուժյան մեջ—դրա մասին եյի քեզ դրել: Մի ժա-
մանակ նույնիսկ մտադիր եյի թողնել Բաքուն և հեռա-
նալ Ռուսաստան, կոպեկ չունեյի, խրախուսող և ոգնու-
թյուն հասցնող չունեյի, մտերիմ չունեյի—ինչ անե-
յի. սակայն յերկար մտածելուց հետո և վերջապես մի քանի
իմ լավ բանվորների ընթացքը տեսնելով, նկատելով, վոր
վորոշ գործ կկարողանամ կատարել, գուցե հնարավոր կը
լինի վորոշ աշխատանք տանել և դիակը սաղացնել, մտա-
ծեցի և վճռեցի մնալ: Այսոր արդեն խրված եմ պարտքե-
րի մեջ հակամայից. սենյակ եմ վերցրել, յերևակայիր,
բայոններ գնալու համար անհրաժեշտ ճանապարհածախսը
ինքս եմ հոգում, փող չկա, կոպեկ չեմ ստանում: Իմ բախ-
տիցս յեկավ և Կարինյանը. անցյալ որեր կազմեցինք ներ-
կա յեղող ույժերից մի փոքրիկ ժողով—պրոպագանդիստա-
կան կոչված և աշխատանքը բաժանեցինք իրար մեջ—
ПОМИМО «տեղական մարմնի» և «Կ. Կ.»-ի. այսոր բայոն-
ներում քիչ-քիչ աշխատանքը գնում ե, մանավանդ Բիբի-
չեյբաթում, վորտեղ ամեն որ ժողովներ ենք կայացնում.

208
A 77561
7057
199



յիս յուրաքանչյ շր յերեկո գնում եմ աշխատելու և յերեկո երն ել քաղաքում պարապում եմ գիտակիցների հետ, մոտ 3 հոգի, վորոցից ուզում են պրոպագանդիստներ պատրաստել: Առ այժմ գոհ եմ մեր վիճակից և իմ աշխատանքից, տեսնում եմ, վոր վորոշ գործ ե շինվում. գրեցին, վոր զամեր բոսյ կը—Սարգիլը^{*}). մտադիր ենք վորոշ քալ անել. հոսանք ե սկսվել մեր կազմ. մեջ՝ դուրս անել բոլոր շաշխատող ուժերին. դա համար անհրաժեշտ ե մի խորհրդատուովի նման բան հրավիրել. տեսնենք ինչ կլինի: Չեմ իմանում, Թիֆլիսում ինչ կա, միայն գիտեմ, վոր Յեսայիմը^{**}) հեռանում գնում ե Ռուսաստան. իսկ Բաթումից և այլ տեղերից տեղեկություններ չունեմ: Պիճիկը^{***}) ամառանցումն ե—Մանգլիս: Սրակուն լիդերը Չերնովը այտեղ ե. մտադիր ենք այս որերս դիսկուսիաներով դուրս գալ նրանց դեմ սինդիկալիզմից և կոոպերացիաներից խոսել: Յես և Շահում. (այսինքն Շահում մյանը. Ց. Խ) վորոշել ենք քաղաքում մի շարք լեզալ դասախոսու թյուններ սարքել՝ Պատմ. մատ., ազգ. հարց. և հուլային հարցի մասին, իբր կոնտր դասախոսու թյուններ Խաժակի դեմ, վոր նորերս յեկավ կարդաց ահագին դեմագոգու թյուններով և զնաց: Արդեն սթափեցնում ենք քնից և մեր կ կ. ականներին վաղը թերթի իրավունք ստանալու համար խնդիր եմ ուզում տալ. վորոշվել ե մի փոքրիկ գումար հավաքել և անպայման թերթ հրատարակել. առանց դրան ծանր ե ապրել: Ահա, Յուլակ Չան, իրերի դրու թյունը. գրում եմ քեզ միայն, խնդրեմ մարդու չհայտնես: Ըստ յերևույթին մեր գործերը լավանում են. Յեթե հնարավոր ե դու յել այդտեղ մի յերեկույթից բանից տայիր:

Ուրիշ ինչ ես շինում: Ինչով ես պարապում. գրիր

^{*}) Սարգիս Սրապիոնյանի (Լուկաշինի) մասին ե:

^{**}) Հայտնի բանվոր սոցիալ-դեմոկրատ Գարեգին Կողիկյանը:

^{***}) Գագիկ Պիճիկյանը:

մանրամասն. յես այնքան զբաղված եմ, վոր չեմ կարո
ղանում կարդալ և այլն. ուզում եմ հողային հարցս վերջ-
նականապես մշակել, տեսնեմ՝ կհաջողվի թե վոչ: Այց-
յալնհրս գրեցի Վահանին *) , ափսոս, վոր նրա հետ այդ-
պիսի անախորժ բան ե պատահել. նա այստեղ ել արդեն
հռչակվեց—կարդում են նրա «Յերկրի Չայնում» լույս տե-
սածները: Բարևիր այդտեղ ծանոթներին և ընկերներին:
Գրիր շուտով և աշխատիր բաց նամակներովդ ազատ
չգրել, վորովհետև կարդում են ըստ յերևույթին:

Քո՝ ԱԼՅՈՇԱ

Ներքին, սուբիեկտիվ աշխարհը, անձնականը—յերկ-
րորդական, վոչինչ: Ալ. Մյասնիկյանը վոչ մի «մո-
լություն» չուներ. կինն ու գինին, աշխարհի վայելքներն
ու փառքը յերբեք չկլանեցին նրա հոգին, — սակավապետ
եր, ժուժկալ: Յերբեք կրքերի զոհ չդարձավ, վորովհետև
միայն մի կիրք ուներ — կոմպունիզմի իդեալը: Յեվ հանուն
այդ իդեալի յեր կազմակերպում իր բոլոր զիտական պա-
րապմունքները: Զարմանալի չե նրա վոչ այնքան աշխա-
տունակությունը (քանակ), վորքան պարապելու սքան-
չելի սիստեմը (վորակը)՝ իրեն հետաքրքրող խնդիրների
սահմաններում լրջորեն խորանալ գիտեր խելամուտ լինե-
լու համար յերևույթների պատճառներին: Հողային հարցը
առանձնապես ուսումնասիրել եր ու վորոշ խնդիրներ պար-
զելու համար նամակ եր գրել Կարլ Կաուցկուն, վերջինիս
«Հողային հարցի»-ի առթիվ:

«Միակողմանի» յեր համարվում մեր շրջանում:

Մինչդեռ մենք մեր «բազմակողմանիության» հետե-
վանքով հաճախ եյինք տատանվում—հակամարքսիստական
բանակից յեկող ամեն մի սրամիտ պարադոքս ընդունակ եր
վորոշ ժամանակով ազդելու մեր հավասարակշռության

*) Այսինքն բանաստեղծ Տերյանին:

վրա, — նա խուլ ու համր եր բուրժուական գիտության բու-
լոր հուշկապարիկների գեղգեղանքների հանդեպ:

Վորոնուժների ընթացքում մենք ծայրահեղությունների մեջ եյինք ընկնում, մոռանալով հնադարյան հայ հեղինակի իմաստությունը՝ «Փամանակ մահկանացուաց սուղ և ան-
յայտ ե»։ Նա շտապում եր կյանքի մեջ մարմնացում տալ
իր գաղափարներին, կարծես գաղտնի նախազգացումն ու-
նենալով իր վաղաժամ վախճանի:

Մենք ավելի «հետաքրքրական» եյինք, ավելի հան-
րագիտուն, ավելի ճկուն — ավաղ, յերբեմն մինչ ոպպոր-
տյունիզմի աստիճանը — նա զարմանալի համառությամբ
պնդում եր նույնը՝ «գործն այնպես ե վոզևորել ինձ և մար-
մին ու արյուն դարձել իմ մեջ, վոր վոչ մի տատանում
չի կարող խախտել վոչինչ ու վոչինչ»: Անվկանդ կամքի
ու անսասան համոզմունքների տեր՝ նա միաժամանակ ինչ
վոր հեղության հասնող անսպասելի մեղմություն ուներ:
Անհողդողդե եր և համբերող, մոլեռանդությունից ազատ
եր, յերբեք չեր բռնանում իր հակառակորդի համոզմուն-
քի վրա, չեր բռնադատում, չեր աշխատում նվաստացնել
հակառակորդին:

Զգաստ եր վերին աստիճանի, մարգարեական «խեն-
թություն» չուներ: Հեղափոխական գործողության հերոս
չեր նա, այլ հեղափոխական անձնանվեր, քրտնաջան
մշակ*):

Զարմանալի ոժտված ել տսկտի զգացմունքով. նա
մեր ուսանողական ժողովների լավագույն, մշտական նա-
խազահն եր՝ իսկական նավավար, կոչված ղեկավար: Ճիշտ

*) Մյասնիկյանի դերը Հոկտեմբերյան հեղափոխության
որերին և քաղաքացիական կռիվներում դեռ ևս ճշտորեն պարզ-
ված չե մեր մամուլում, սակայն յես համոզված եմ, վոր անհատա-
կան քաջությամբ չե Ալ. Մյասնիկյանը վորոշ դեր խաղացել մեր
որերի պատերազմի մեջ, վորտեղ աքիլլեսյան խիզախությունն
ընդհանրապես միանգամայն յերկրորդական նշանակություն ունի:

ե ասոււմ Շ. Ամիրխանյանը, վոր նա սառնասրտության ու հանգստավետության հերոս էր:

Նա գրչի և խոսքի հերոս չեր՝ նրա վոճը չունի պատկերավորության փայլը, հանկարծակիի բերող աֆոմիզմի հմայքը և, այնուամենայնիւ, թեև կորովաբան չեր, թեև խոշոր վոճաբան չեր, նրա խոսքը ազդոււմ էր իրաւարգությամբ, բովանդակալիությամբ, դրական համոզվածությամբ: Յես չեմ գարմանոււմ, վոր նա իր կուսակցության մեջ մեծ հեղինակութիւնն էր ձեռք բերել. Հայաստանի ամենագիտակից բանվոր-կոմմունիստներից մեկի ասելով, նա՝ «պա! գերմարդ էր»: Մասնիկյանն ավելի պետական գործչի խառնվածք ուներ, քան թե կլասիկ իմաստով հեղափոխականի: Իր կոչոււմը կրոււմ էր գարմանալի պարգոությամբ: Պարգոության վեհ ազնվութիւնն ուներ նա: Իշխանութիւնն ամենևին չճնշեց նրան, չը «վերացրեց»՝ Հայաստանի Ժողկոմխորհի նախագահի և ռազմական կոմիսարի յերկար շինելը նա կրոււմ էր նույն հասարակ ձևով, ինչպես չերբեմն իր ուսանողական վտիտ վերարկուն:

Վոչ մի բարձրութիւնից նրա գլուխը չեր պտտվոււմ. իր կյանքի բոլոր դրութիւնները, իրեն հանձնված բոլոր դիրքերը նա ընդունոււմ էր իբրև անհրաժեշտութիւն, անխուսափելիութիւն, պարզ պիտոյականութիւն: Ժամանակի, վոչ ել տեղի ու պաշտոնային աստիճանների տարածութիւնը չեցին փոխոււմ նրա վերաբերմունքը դեպի իր վաղեմի ընկերները. տասը տարվա անջատոււմից հետո այնպես ձեռք կմեկնէր, կարծես թե վերջին անգամ չերեկ ե պատահել:

Այ. Մասնիկյանն իր գրական գործունեյութիւնն սկսել է դեռևս աշակերտական նստարանից (թե նախիջևանի թեմական դպրոցոււմ և թե Լազարյան Ճեմարանոււմ): Ուսանողական տարիների շրջանից սկսել է չերևան

գալ հայ մամուլում իր հրապարակախոսությամբ, վոր տարիներ ընթացքում զարգացել, խորացել և ու ընդգրկել բազմաթիվ քաղաքական-հասարակական խնդիրներ: Այսատակցել և բազմաթիվ հայ և ուս պարբերականների, իր կյանքի վերջին տարիներում միաժամանակ խմբագրելով մի քանի հայերեն և ուսերեն թերթեր: Իր հրապարակախոսական ստեղծագործության հիմնական նյարդը յեղել և գործնականության վողին, վորին համապատասխան վոճնել յեղել և վերին աստիճանի պարզ ու անճոռում. դրան չեն հակասում հայերեն հողվածների այն թեթև գրաբարանությունները, վորոնք յերբեմն պատահում են նրա գրությունների մեջ և կարող են խորթ թվալ յերիտասարդ ընթերցողներին: Մարքսիստական անադարտ մտածողություն ու սոցիոլոգիական խիստ մեթոդը բնորոշում են նրա հրապարակախոսությունը: Տվել և մի քանի գրական գործեր, վորոնք մնայուն արժեքներ են ներկայացնում և վորոշ տեղ պետք և գրավեն մեր գրականության պատմության մեջ:

Իրանք այն հողվածներն են, վորոնց մեջ վերլուծություն են յենթարկվել Հովհաննես Հովհաննիսյանի և Ալեքսանդր Ծատուրյանի ստեղծագործությունը, Հովհաննես Թումանյանի պոեզիան և Միքայել Նալբանդյանի հրապարակախոսությունը:

Ինչպես ինքն և մի տեղ նկատել, գրական քննադատ չե բառիս նեղ իմաստով. գրականությանը մոտեցել և սոցիոլոգիական տեսակետից գրեթե բոլորովին—անտարակույս, գիտակցաբար— չըշափելով գեղագիտական հարցեր: Իր սոցիոլոգիական վերլուծություններով, այլ մարքսիստ քննադատների հետ միասին—նպաստել և մեզանում «գրականագիտության» զարգացման գործին: Նրա համար պարզ և յեղել մեր գրաքննադատության հիմնական արատը:

«Հայ գրականության մեջ, շնորհիվ վերլուծական մտքի բացակայության, շատ հարցեր մնում են չվճուված կամ

Թե նրանք «լուծուժ» են ստանում առանց վորևե հիմնա-
վորվան, հենց այնպես, ըստ բարի հայեցողության այս
կամ այն «քննադատի» («Գարուն» արժանախ, III գիրք.
Մոսկվա, 1912 թ. էջ 237—238): Յեվ իր բոլոր գրվածք-
ներում հանդես ե գալիս վորոշ մեթոդով, հիմնավորված
պատճառաբանությամբ և վոչ թե «բարի հայեցողությամբ»:
Մի բանի անգամ առիթներ ե ունեցել շոշափելու զուտ
թեորիական խնդիրներ: «Պարոնը բանաստեղծու թյան նա-
յում ե իբրև մի գիտական շարադրության (դեռ մի կողմ
ենք թողնում այն հարցը, թե նա ինչ հասկացողություն
ունի գիտության մասին), քանիցս գործածում ե նա գե-
ղագիտական, հասարակագիտական բառերը, առաջինի հետ
գործ չունի, յերկրորդն ե նրան զբաղեցնողը: Ի՞նչ ե նշա-
նակում պոեզիան քննել միմիայն հասարակագիտական կամ
միմիայն գեղագիտական տեսակետից, այդպիսի բան չե
կարող լինել. «գեղագիտական, հասարակագիտական» տեր-
մինները այս դեպքում գործածելի են պայմանական իմաս-
տով. մեկով հետազոտելիս, մյուսը աչքաթող անել չի
կարելի: Բանաստեղծությունը անհնարին ե յենթարկել
այնպիսի վերլուծության, ինչպես այդ անվում ե գիտա-
կան խնդիրների վերաբերմամբ» («Մշակ», 1910 թ., № 26,
«Ինչպես են գրվում բեցենզիաները մեզանում», պաշտ-
պանում ե Շ. Կուրդինյանին և B. Lucifer-ին Credo-ի հար-
ձակումներից): Նույն մեթոդային խնդիրը շոշափվում ե տա-
րիներ անց «Գրական քննադատության մեթոդի մասին»
հոդվածում («Նոր աշխարհ» ամսագիր, 1922, № 1):

Իր խիստ կարևոր նյութը հեղինակը հնարավոր ե հա-
մարել սպառել յերկու և կես էջում, տալով մի քանի հապ-
ճեպ ընդհանրացումներ, վորոնք սխալանք կարող են ա-
ռաջացնել: Հեղինակը նախ կարծիք ե հայտնում, վոր
Պուշկինը կարող ե քննվել—ի միջի այլոց—նաև սոցիոլո-
գիորեն, իսկ հետո վճռականորեն պնդում, թե «գրական

քննադատութիւնը չի կարող չլինել սոցիոլոգիական»։ Հոգ-
վածն ուղղված է նրանց դեմ, վորոնց հեղինակը արհա-
մարհանքով անվանում է եստետներ, այսպես բանաձևե-
լով վերջիններիս թեորիան.

«Գեղարվեստը մի ինքնանպատակ մեծութիւն է։ Նա
սոսկ գեղարվեստ է և իր համար է» (ընդգծումները հեղի-
նակինն են)։ Մինչդեռ... «Արդ, վոչ-հասարակական գրա-
քննադատութիւնը քննադատութիւնն չէ. նա գուցե փայտ
է, քար է կամ հիմարութիւնն է, քանի վոր այսպես կոչ-
ված գուտ գեղարվեստ չկա, քանի վոր գեղարվեստը գեղար-
վեստի համար չէ, այլ ընդհակառակը՝ գեղարվեստը—դա
ինքը կյանքն է, հասարակութիւնն է. նա մարդկանց ու
յերկրի համար է»։

Գեղարվեստը գեղարվեստի համար սկզբունքը դավանող
«եստետը» հեշտութեամբ պետք է բեկանե այս խիստ դա-
տավճիւր՝ քննադատը սխալ է մեկնաբանում այդ սկզբունքը։
Յերբ վոր ասում են գեղարվեստը գեղարվեստի համար—մի
միտք, վոր կարող է միանգամայն սխալ լինել—յերբեք չեն
ուզում դրանով ասած լինել թե գեղարվեստը իր համար
է (սա իրոք վոր կլինել փայտ, քար կամ հիմարութիւն...),
թէ նա մարդկանց համար չէ...

Ու ել ավելի խիստ. վոչ-սոցիոլոգիական գրաքննա-
դատութիւնը «դեմ է արդի առաջադիմութեան, նա բուր-
ժուազիայի սպասավորն է, նա ընկալիչի հլու գործիքն
է։ Մեր եստետները, մեր Այխենվալդները, մեր գրական
միմոսներն այդ բանը չեն հասկանա, ավելի շուտ՝ նրանք
այն չհասկացող են ձևանում։ Այդ իսկ պատճառով նրանք
գեղարվեստի ասպարիզում բուրժուազիայի ազենաները
պետք է համարվեն»։

Զարմանալի անզգուշ պարզացում է սա բարդ պրո-
բլեմի՝ իբր գրականութիւնը միայն հասարակական կյանք
է, իբր գրական յերկասիրութեանը միայն սոցիոլոգիական
տեսակետից կարելի չէ մերձենալ, իբր այլ կարծիք ունե-

ցողները եստետներ են (արհամարհական իմաստով), Այ-
խենվալդներ և անգամ...գրական միմոսներ: Մինչդեռ
մարքսիզմը իր հեղինակավոր ներկայացուցչի, Գ. Վ. Պլե-
խանովի բերանով ասում է՝ «ամեն մի տվյալ գրական
յերկի սոցիոլոգիական համարժեքի վորոշումը կմնար վոչ
լիակատար, հետևապես և անճիշտ, այն դեպքում, յեթե
քննադատը խուսափեր նրա գեղարվեստական արժանիքների
գնահատանքից: Այլապես ասած, մատերիալիստական
քննադատության առաջին գործողությունը
վոչ միայն չի վերացնում յերկրորդ գործողու-
թյան հարկավորությունը, այլ յենթադրում է
նրան, իբրև իր անհրաժեշտ լրացումը» (ընդ-
գծումը հեղինակինն է. Искусство и Литература в марк-
систском освещении. Составили Б. Столпнер и П. Юшке-
вич, Москва, 1924, ч. I էջ՝ 155): Անհրաժեշտ լրացումը!

Հիշված հայ հեղինակներին նվիրած իր հոդվածներում
Մյասնիկյանը հանդես է գալիս իբրև սոցիոլոգ, գիտակ-
ցաբար սահմանափակելով իր ուսումնասիրության շրջա-
նակները:

«Գարուն» արձանախում*) — վորի III, քննադատական
հատորը նշանակալից յերևույթ է մեր գրականության պատ-
մության մեջ՝ մարքսիստների առաջին կազմակերպված
արշավանքը գրականության ասպարիզում — Մյասնիկյանը
գետեղել է հոդված՝ «Հ. Հովհաննիսյանի և Ալ. Ծատուր-

*) Խմբագրական կազմը հետևյալն էր՝ Կարապետ Կուսիկյան,
Ալեքսանդր Ծատուրյան (բանաստեղծը), Ալեքսանդր Ծատուրյան
(Ռուբենին), Ալեքսանդր Մյասնիկյան, Վահան Տերյան, Կարեն
Միքայելյան և յես. հետագայում հրավիրվեց նաև Պողոս Մակինց-
յանը: Ռուբենին ու Մյասնիկյանը, նացիոնալիստական վոգի-
նումարելով Լ. Շանթի գրվածքի մեջ, դուրս յեկան խմբագրական
կազմից, բայց մնացին իբրև աշխատակիցներ:
Պետք է հիշատակվի նաև Մարտիրոս Սարյանը, վոր նկա-
րել է «Գարուն»-ի շապիկը:

յանի բանաստեղծությունների հասարակական արժեքը»։
Հեղինակին հետաքրքրում է բանաստեղծների քնարի հասարակական բովանդակությունը միայն. շեշտում է, վոր գեղարվեստականի հետ վոչ մի գործչունի։

Բանաստեղծների պոեզիայի հասարակական բովանդակությունն ըմբռնելու համար, ասում է, «պետք է ծանոթ լինել բանաստեղծների ժամանակաշրջանին վերաբերյալ և մինչև այն գոյություն ունեցող հասարակական գաղափարներին։ Սակայն հասարակական գաղափարները վոր ևե շրջանի անըմբռնելի են առանց այդ գաղափարների հեղինակների, վորպիսին հասարակական խավերն են հանդիսանում։ Իսկ սրանք կապված են հասարակական կյանքի նյութական բովանդակության՝ յուրաքանչյուր ժամանակի տնտեսական դրության հետ»։

Այլ. Ծատուրյանի «Բանվորուհու որորը» քննադատին թվում է նշանակալից հանգամանք «քանի վոր նա հականերդաշնակություն է մտցնում այնտեղ, վորտեղ հայ ազգի հայտնի թե անհայտ գեղարվեստագետները չեն դադարում անշնորք կերպով ծամծմելուց այն բոլոր փտած մտքերն ու անարժեք գաղափարները, վոր ժամանակ է վերջապես գահավիժելու իրանց անարժան բարձրությունից և հնության գիրկը նետելու»։ «XX դարում չի կարելի հանդուրժել նացիոնալիզմի քարոզը, այն ել ուստահայի կյանքում, վորի վիճակը սերտ կերպով կապված է համապետական իրականության հետ»։

Մյասնիկյանի ընդհանրացումներն, ինչպես տեսանք, յերբեմն վիճելի յեն, նրա վերլուծությունները միշտ ել նրբամիտ չեն, բայց կա մի հանգամանք, վոր աչքի յեզարնում և դաստիարակիչ դարձնում նրա գրությունները, դա աշխարհայացքի զարկերակն է, վոր ուժեղ կերպով

խփում է նրա բոլոր գրվածքներում, հրահրում ընկերացողի հարցասիրությունը, մտածել տալիս նրան:

Հովհաննես Թումանյանին նվիրած հոդվածը նա անվանում է «սոցիոլոգիական ակնարկ» («Հովհաննես Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը», «Նորք», գիրք յերրորդ, 1923) և նրա մեջ փորձ է անում վերլուծելու բանաստեղծի իդեոլոգիան և սոցիոլոգիորեն մեկնաբանելու այն: Առանձնապես ուշագրավ են կոմունիստ քննադատի խոսքերը Թումանյանի ստեղծագործության, այսպես ասած, հավերժականության մասին— լավ դաս՝ հին արվեստը ժխտող ջահելներին! — Թումանյանի չերկերը, հեղինակի կարծիքով, անսահ են, սերունդներ պետք է կարդան նրանց գեղարվեստական հաճույքով, հետաքրքրությամբ ու կատարյալ բավականությամբ: Թումանյանին «կկարդան յերկար տարիներ: Ապագա սերունդները նրան կսիրեն շատ ժամանակ»:

Այստեղ արդեն վորոշ չափով նախագուշակել կարելի չէ Մյասնիկյանի վերաբերմունքը դեպի նոր արվեստի պտրումները: Այդ մասին նա հատուկ հոդված ունի, վոր իր զգաստ գործնականությամբ ու առողջ վոգով ճշմարիտ ուղեցույց կարող է ծառայել նոր արվեստագետներին համար: Հոդվածը նվիրված է պրոլետարողների «Մուրճ» ամսագրի առաջին համարին («Պորճրային Հայաստան», 1922, № № 267—268):

Շատերին պետք է զարմայնի հեղինակի հայտարարությունը, վոր նա, իհարկե, անում է միանգամայն անկեղծ. «մենք գրական քննադատ չենք, և յեթե առհարկի մի յերկու նկատողություն արեցինք մեր չերիտասարդ գրողների թերևս յերկրորդական ստեղծագործությունների առթիվ, թող դա համարվի սովորական բնթերցողի և վոշգեղարվեստագետի ստացած տպավորությունը նորեկ պրոլետարական պարբերականից»:

Առաջադրելով այն սկզբունքը, թե «առանց հասարակական կոչման՝ չկա գեղարվեստ, ավելի ևս՝ պրոլետարական գեղարվեստ», հեղինակը պարզաբանում է, թե վորն է այն մթնոլորտը, վորի մեջ պետք է զարգանա մեր գրականությունը, «այն ամենը, վոր կա, ապրում ու բովանդակություն է տալիս այն կյանքին, վոր կոչվում է խորհրդային Հայաստան: Դուք կարծում եք թե այդ կյանքը պարփակվում ենրանով, ինչ մենք ստացել ենք Պիտերից. դուք կարծում եք, թե այդ կյանքը կբարձրացնենք ընդորինակելով այն, ինչ արդեն յերգել ու ավելի շնորհքով կրկնել է Ռուսաստանի բանվոր գրողը...»: Ու կոչ է անում դեպի իրականություն, դեպի հայ կյանքը, դեպի կոնկրետ ապրումներ: Այս գեոթեական «գործնականությունը» բանաստեղծություն նկատմամբ, իհարկե, մոռացնել չի տալիս կոմմունիստական իդեալը:

Հայաստանի պայմաններում զուտ պրոլետարական արվեստ գոյություն չունի. ավելին՝ նա չերկար ժամանակ չի յել կարող գոյություն ունենալ, նա հեռավոր ապագայի գործ է: Ստեղծագործության յելակեար միշտ պետք է կյանքը լինի: Իսկ ի՞նչ է հայ կյանքը «Պիտեր», — վո՛չ, ընկ. Ազատ-Վշտունի: «Միթի՛նկ» է կամ «բանկե՛տ»: Վո՛չ, ընկ. Գուրգեն Մահարի: «Բրոնզե մի գո՛ւռ»: Վո՛չ, ընկեր Մուրման: «Վո՛չ» պնդելով մենք ուզում ենք ասած լինել, վոր հեղափոխական գրողը, աշխատավորության իդեալներով տոգորված բանաստեղծը հայ կյանքում այս 1922 թ. նոյեմբեր ամսին պետք է վոր տեսնի այն, ինչ վոր կա այնտեղ, պետք վոր յերգի այն, ինչ բնական է, սովորական ու հուզող գյուղացու, քաղաքի աշխատավորի և հեղափոխականի միտքը, հոգին, վողջ եյությունը»:

Զգաստ ընտրիզմի տեսակետն է սա, վերջին հաշվով — անկեղծության պահանջը:

Ամենուրեք և միշտ հրապարակախոս՝ Մյասնիկյանը,

բնականաբար, առանձնապես ուժեղ պետք է լիներ այն գրվածքում, վոր նվիրված է Միքայել Նալբանդյանի հրապարակախոսությանը և գերազանցորեն սոցիոլոգիական բնույթ ունի: Յեվ զարմանալի չէ, վոր չնայած իր հասակին (գրված է 1910 թվականին, բոլոր հիշված հոդվածներից առաջ), Միք. Նալբանդյանին նվիրված աշխատությունն ամենահաջողը պետք համարել Մյասնիկյանի ուսումնասիրությունների շարքում: Դա մի հետաքրքրական փորձ է սիստեմատիզացիայի լենթարկելու, պարզաբանելու Միքայել Նալբանդյանի խրթին ուսումնաբեր:

Հիշատակելով Լեոի խոսքերը Նալբանդյանի հրապարակախոսական հոդվածների մասին, «վորոնք այնքան ել շատ չեն, վոչ ել շատ բու՛անդակալից ու բազմակողմանի», Մյասնիկյանը նկատում է՝ «Նոր ժամանակների ուսասանայ ամենաառաջնակարգ գրական դեմքի հերքվում է վորպես հրապարակախոս և բանաստեղծ է հայտարարվում. սատարորինակ թյուրիմացություն է: Նույնպիսի հաջողությամբ բանաստեղծ կարելի չէ համարել և Նազարյանին, Աբովյանին կամ Բաֆֆուն, վորովհետև նրանք ել են Նալբանդյանի նման վոտանավորներ գրել: Սակայն դա նշանակում է լինել բանաստեղծ: Նալբանդյանը՝ բանաստեղծ, վորի վոտանավորաձև գրական արտադրություններն ամենաառաջ գեղարվեստական գործեր լինելուց հետու են: Այստեղ նա լսկ արժածում է իրան այնքան հատուկ, այնքան բնական հրապարակախոսական գաղափարներ: Սակայն... տեսեք, վոր այդ կողմից նա այնքան ել «բովանդակալից» ու «բազմակողմանի» չէ: Այդպես կարող են կարծել այն մարդիկ, վորոնք Նալբանդյանին ամենևին չեն կարդացել, իսկ դրանց տեղը շատ է իհարկե: Ըստ պ. Լեոի վկայության մեզ մոտ ամենքն են այդպես. դա գոնե 1903 թվին եր, յերբ գրել է նա իր վերոհիշյալ աշխատությունը» (խոսքը վերաբերում է ուսասանայ գրականության նվիրած գրքին):

Սրամիտ բանաձևի մեջ բնույթագրելով Միքայել Նալբանդյանի աշխարհայացքը՝ «դիպեկտիկա ու մետաֆիզիկա, մատերիալիզմ ու իդեալիզմ, գիտություն և ուտոպիա»՝ հեղինակը արժեքավոր գուգահեռ է անցկացնում 60-ական թվականների իդեոլոգիայի և Արժրուհական լիբերալիզմի միջև: Միքայել Նալբանդյանը ուժեղ կերպով կրել է ոուս գրողների, Բելինսկիների և Չերնիշևսկիների ազդեցությունը և ազդարարել է մտքեր, «վորոնք յերբեք չեն կարող հաշտվել բուրժուական մտածողության ու լիբերալական տեսլագիտության հետ»:

Սա կարևոր և արգասավոր ընդհանրացում է, վոր շերտավորման գիծ է անցկացնում հայ հասարակական մտքի պատմության փուլերի մեջ և ազդակ հանդիսանում նոր վորոնումների, լոսաբանության խորացման նոր հնարավորությունների:

Թե վորքան խորն է յեղել Մյասնիկյանի հարգանքը Միքայել Նալբանդյանի նկատմամբ՝ ցույց են տալիս հետազայում գրված հոդվածի հետևյալ տողերը.

«Նալբանդյանը տասնյակ տարիների, յերկար ժամանակների միջով ու հարյուրավոր, հազարավոր մեշանական գլուխների վրայով մեզ է նայում և միանում է արդի մարտնչող բանվորությանը, նրան սատարող աղքատ գյուղացիությանը» («Պաշքար», 1923, «Միք. Նալբանդյանն ու հայ ինտելիգենցիան»):
այնքան նա արժեքավոր է համարում Նալբանդյանի գաղափարների դրական տարրերը:

Այլ Մյասնիկյանի խոշոր ընդունակությունները միայն այն ժամանակ արտահայտվեցին լիակատար կերպով, յերբ նա դեկավար դարձավ պետական շինարարության, գլուխկանգնեց Հայաստանի կառավարության և հնարավորություն ստացավ իր գաղափարները կիրառելու կյանքում:

Ճիշտ է ասում Աշոտ Հովհաննիսյանը՝ Ալ. Մյասնիկյանը բանվորական և գյուղացիական Հայաստանի ամենախոշոր պետական մարդն էր: Նա մեծապես ոժտված էր այն շնորհով, վոր ընդունակ է մարդիկ կազմակերպելու, հմայելու նրանց, գործնականության շունչ տալու, սխտեմա ստեղծելու:

Սակայն Ալ. Մյասնիկյանի նշանակութունը իր ամբողջ ծավալով գծագրվում է միայն այն ժամանակ, յերբ նրան դնում են հայոց պատմության հեռանկարների մեջ, անկախ նրանից, թե ի՞նչ վերապահումներ պետք է անել, վորոնց մասին մենք գիտենք, — մեզ համար անկներև է միանգամայն, վոր խորհրդային Հայաստանը բոլորումն է այն անլուր տառապանքների, վոր դարերի ընթացքում կրել են հայ ժողովուրդը, կատարումն այն ազատատենչ իղձերի, վորոնք չերբեք չեն մեռել հայ աշխատավորության սրտում:

Դարերի փլատակների տակից վերածնված հայ պետականության սիմբոլն է Ալեքսանդր Մյասնիկյանը:

Յեվ չեթե քննադատ-Մյասնիկյանը, հրապարակախոս Մյասնիկյանը, հեղափոխական-Մյասնիկյանը հայ մարքսիստական բանակի ականավոր ներկայացուցիչներից մեկն է սոսկ, Ռուսաստանի հեղափոխության մարտիկներից մեկը — վերջիվերջո — տասնյակ առաջնորդներից մեկը, ապա պետական գործիչ Ալեքսանդր Մյասնիկյանի անունը պատկանում է դարերին...

Իր կրթութունն ստանալով հայկական դպրոցներում, Ալ. Մյասնիկյանը տիրապետել է հայոց լեզվին, քաջ ծանոթ է յեղել հայոց գրականությանն ու պատմությանը, միշտ հետաքրքրվել է հայկական ազատագրական շարժման, հայ աշխատավորության զարգացման պրոբլեմներով:

Ազգային խնդրին նա նվիրել է մեծ հողվածներ, դասախոսութուններ, վորոնց մեջ աշխատել է մարքսիստա-

կան մտքի լույսով պարզել այդ կնճռոտ խնդիրը: Միշտ ծառայել է նացիոնալիզմի դեմ, քննադատել-դատապարտել այն ավանտյուրիստական գործելակերպը, վոր յուրացրել էլին մեզանում ազգայնական կուսակցութիւնները և մանավանդ նրանցից հզորագույնը, Ն. Հ. Դաշնակցութիւնը:

Տաճկահայ խնդիրը միշտ յեղել է Ալ. Մյասնիկյանի մտահոգութեան հուզող առարկան: Նա միշտ կարծել է, վոր պրոլետարիատի իդեոլոգը, հայ մարքսիստը չի կարող անտարբեր լինել այդ խնդիրների խնդրի վերաբերմամբ, վոր նա «անիծյալ» եր անվանում: Վերջին տարիների ընթացքում ևս Ալ. Մյասնիկյանը մի մեծ բրոշյուր է գրել արտասահմանում գործող հայ կուսակցութիւնների մասին և ձեռնարկել է պատմական ընդարձակ ուսումնասիրութեան, վոր նվիրված պետք է լիներ ազգային շարժման անցյալին: Ն. Հ. Դաշնակցութեան խիստ քննադատներից մեկն է յեղել մեզանում Ալ. Մյասնիկյանը:

Հայկական հարցը—գրում էր նա 1914 թվականին— («Մշակ», 1914, № 3, «Հայկական հարցի գործնականը») — թյուրքահայերի բարեկեցութեան, նրանց կայք ու գույքի, կյանքի ապահովութեան, նրանց մարդավայել կենցաղի հարցն է»:

Թյուրքահայ շարժման վիրավոր կողմերից մեկը յեղել է այն, վոր «շարժման կորիզը առաջ է յեկել ու զարգացել է կովկասահայելի մեջ. գործիչները նստած են յեղել արտասահմանում, խմբերն անցել են կովկասից»: Թյուրքահայերի ազատագրութիւնը «իրանց թյուրքահայերի գործը պետք է լինի», վորովհետև դրսի ղեկավարութիւնը հիմնված է լինում անտեղյակութեան, տրհասութեան վրա և առաջ է բերում բախտախնդրութիւն:

«Շատ կարևոր պարագա» համարելով այն իրողութիւնը, վոր 1908 թվականին տաճկահայ շարժումը սրկ-

սուժ եւ անցնել թյուրքահայերի ձեռքը, Մյասնիկյանը շարունակում եւ. «ժամանակ եւ վոր թյուրքահայ դատը դուրս գա հովանավորվողի, յենթարկվողի դրուժյունից. ժամանակ եւ վորպէսզի նա առաջ տարվի իր ույժերով, այն մարդկանց միջոցով, վորոնց նա անմիջապէս վերաբերում եւ»:

Բայց կարող ե՞ր մարքսիստ հեղափոխականը, պրոլետարիատի իդեոլոգ-ինտերնացիոնալիստը համակրանքի խոսք չասել տաճկահայ ազատագրական շարժան մասին: Կա՞ մի ժողովուրդ, վորի ազատագրական պայքարը մոտ չլինի պրոլետարիատի իդեոլոգի սրտին՝ լինի դա չինականը, չեզիպտականը թե մարոկկականը...

Այ. Մյասնիկյանը վոչ միայն համակրանքի խոսք եւ ասել տաճկահայ դատի մասին, այլ և ոգնուժյան, աջակցուժյան անուղղակի կոչ արել:

«Դրսի գործը» — կարծում ե նա, — «պետք ե լինի՝ նըպաստել թյուրքահայ խնդրի լուծման սթանդակիչ աշխատանքի միջոցով՝ գործով թե խոսքով»:

Վճռականորեն դատապարտելով Հ. Հ. Դաշնակցուժյան ավանտյուրիստական գործելակերպը, Այ. Մյասնիկյանը խիստ քննադատուժյան ե յենթարկել նաև այդ կուսակցուժյան ծրագիրը, իբր թեորիան:

«Նախ թեորիայի վերաբերմամբ դաշնակցականները միշտ յերջանիկ անհոգուժյուն են ցույց տվել. յերկրորդ, այն վոր թեորիան ե, վոր ույժ ու կարողուժյուն կունենան նա Դաշնակցուժյան Արշակավանը մտնելու» («Մշակ», 1914, № 134, «Ազգային հարցի մոտիկ անցյալից Ռուսաստանում»): Ավելի ճիշտ, Դաշնակցուժյան Արշակավանը վորդեգրել ե ամեն կարգի և յերանգի զաղափարներ, վորոնք, մի կողմից, մոտենում են մարքսիզմին, իսկ մյուս կողմից, հասնում բեակցիոն խավարամտուժյան ու կենդանաբանական նացիոնալիզմին:

Սոցիալիզմ և շովինիզմ. յերկրորդ Ինտերնացիոնալ
և Թյուրք տարրի «մաքրում – սրբում»...

«Նրանք միենուշն ժամանակ զանազան կերպ են խոսում, — հավաստում ե Մյասնիկյանը, — նրանցից մեկը անում ե այն, մյուսը հերքում ե. ցույց են տալիս վորոշ գործունեյություն և հետո հրաժարվում նրանից («Սորհրդային Հայաստան», 1922, № 77, «Իաշնակցության փաստաթղթերից»):

Ապա նրանց «անկախ» Հայաստանը, յեվրոպական իմպերալիզմի հովանու տակ! Համաշխարհային պատերազմը իր արհավիրքներով դեռ ևս վերջին փորձությունը չե՞ր հայ ժողովրդի համար: Փետրվարյան հեղափոխությունը «անկախություն» բերեց Հայաստանին, վողբի, վորբի կըլասսիկ հայրենիքին: Ի՞նչ տվեցին ազգայնական կուսակցությունները Անդրկովկասին, կուսակցություններ, վորոնցից յերկուսը — ավաղ — և Ինտերնացիոնալի անդամներ եյին և մինչև որս ել հալածված հերոսների հոշակ են վայելում Յեվրոպայում: «Արյուն, պատերազմ, արցունք, թշվառություն, ամբողջ Անդրկովկասի և նրա ամբողջ նյութական ու հոգևոր կուլտուրայի ավերմունք ու կործանում», — ասում ե Ալ. Մյասնիկյանը իր վերջին ճառում:

Մի դրություն, վորի ճշգրիտ նկարագրության համար ներկերը պետք ե վերցնել բարբարոսական մեջնագարից, դրություն, վորի նկարագրությունը կարելի յե կարգալ Արիստակես Լաստիվերացու բոցեղեն գրքում միայն.

«Յոր յաւուրս մեր զարթեան պատերազմունք ի շորից կողմանց. յարևելից սուր, յարևմտից սպանումն, ի հիւսիսոյ հուր և ի հարաւոյ մահ. բարձան ուրախութիւնք յերկրէ, լոեցին ձայնք քնարաց, լոեցին բոմբիւնք թըմբկաց, բարձրացան աղաղակք լալեաց»:

Այսպես եր Հայաստանի դրությունը, յերբ 1920 թվականին կովկաս հասավ Հոկտեմբերի շունչը:

Բուրժուական ազգայնականությունը դեպի կործանում
եր տանում Անդրկովկասը, պրոլետարական ինտերնացիո-
նալիզմը յեկավ փրկելու նրան, խաղաղ զարգացման ու-
ղիները ցույց տալու: Ազգայնական կուսակցությունների
իշխանության դառը փորձը ապացույց էր, վոր ազգային
խնդիրը, մանավանդ մեր պայմաններում, միայն
միջազգայնականության հողի վրա կարող է
լուծվել, վոր միայն ինքը աշխատավորությունը արող
է աշխատավորական սկզբունքներով ազգամիջյան խաղա-
ղություն հաստատել:

«Մեր որիենտացիան աշխատավորական է», — ազդա-
րարեց Ալ. Մյասնիկյանը Հայաստանի Խորհուրդների ա-
ռաջին Համագումարի առաջին նիստում: («Խորհրդային
Հայաստան», 1922, № 26):

«Գրությունն, այո, մնր է, բայց նրան պետք է հա-
նել այդ վիճակից: Գրակիրը ասում էր հին Հռոմում, թե
վայրի գազաններն անգամ իրենց գլուխը հանգստացնելու
տեղ ունեն, իսկ ստրուկները վոչ: Մի տարի առաջ նույն
բանը Հայաստանի մասին կարելի չէր ասել, վորը խորհրդ-
դային իշխանության շնորհիվ այժմ վայելում է ազատու-
թյուն և խաղաղություն»:

Ալ. Մյասնիկյանին խորապես հատուկ էր իրականու-
թյան զգացումը և խոսքեր ունի նա, վորոնք չպետք է
մոռացվեն յերկար ժամանակ: «Յերեսնորդ դեպի դյուղ»
ներկայիս նշանաբանը, պայծառորեն արտահայտվել է նրա
ճառերում և հոգվածներում, ինչպես և տեղական առանձ-
նահատուկ պայմանները հաշվի առնելու անհրաժեշտու-
թյան գաղափարը: «Այսորվա Հայաստանում պետք է կի-
րառել խորհրդային կարգերը, պետք է ուժեղացնել կոմուն-
նիստական շարժման սաղմերը, բայց առանց բառացի ընդո-
ւինակության, առանց անպատճառ կրկնելու այն ամենը,
վոր տեղի չէ ունեցել Ռուսաստանում, վորովհետև մեծ

Ռուսաստանի կարմիր գոտին մեր վտիտ մարմնի համար
շատ յերկ կլինի, ինչպես հարը գոտին՝ Սասունցի Դավ-
թի մեջը : Դա կլինի ծիծաղելի : Յեվ դա անողուտ է,
ինչպես : դ մենք տեսնում ենք : Յեվ դա, ավելին, նույն
խակ փաստակար է : Ինչո՞ւմն է այդ փաստը : Գերազանցա-
պես գյուղացիական և հետամնաց, աղքատ գյուղացիական
յերկրում պետք է ցույց տալ խորհրդային կարգերի առա-
վելու թյունը առորյա գործնական աշխատանքով, տարված
գյուղացու անմիջական շահերին վերաբերող հարցերի
շուրջը : Մենք տվինք մեր գյուղացուն խաղաղություն :
Սա միանգամայն շոշափելի արդյունք է և գյուղացին մեզ
հասկանում է, վորովհետև մեզանից առաջ այդ բանը նրան
վոչ միայն չեն տվել, այլ գնացել են խաղաղության դեմ :
Մենք տալիս ենք գյուղացուն սերմացու, սա յել շատ
պարզ է ու հասկանալի, սրա համար նա մեզ չի հայհույի,
այլ ավելի ևս կփարի խորհուրդներին» :

Գյուղացուն պետք է մոտենալ շոշափելի ազի-
տացիայով : «Ճիշտ է, գյուղացին պարզ է ու բարե-
սիրտ. բայց նա շատ բան է տեսել, մանավանդ մեր գյու-
ղացին. նա ստիպված դարձել է թովմա առաքյալը՝ «ձե-
ռով» շոշափեմ, այնուհետև կհավատամ» : Թե չե, ի՞նչ «կոմ-
մունիզմ», «պրոլետարիատ», «արտել» և այլն, վոր նրա
համար սոսկ հնչյուններ են, յեթե այն գյուղացուն հրամ-
ցըրվի առանց բովանդակության : Մինչդեռ՝ յեթե մեր կոմ-
մունիստական բարակ շերտը և շատ սակավաթիվ բան-
վորությունը (դա այդպես է, վորքան էլ մենք շարունակ
ասենք ու կրկնենք՝ «պրոլետարիատ», «բանվորություն»)
գործնականը վերցնի, գործնականը անի, գործ-
նականորեն մոտենա գյուղացուն, առանց ճոճուան խոս-
քերի, առանց հորովելու «կոմմունիզմը», սրանով նրանք
փաստորեն և հեշտությամբ կանեն այն, ինչ վոր, իհարկե,
մեր բոլոր ընկերներն են ուզում կատարել, սակայն վորը

մեզանից շատ շատերը, ինչպես ուսանելն են ասում, «**ВЕР-
УМЕЮЧИ**» առաջարկում են գյուղացուն» («Սորհրդային Հա-
յաստան», 1922, № 81, «Կոմմունիստներ աշխատանքը
Հայաստանում»):

Գործնականը, գործնականը, գործնական-
որեն. ահա Ալ. Մյասնիկյանի բոլոր ծրագիրների վոզին:

Այսքան ուշագիշտ ու սրտացավ վերաբերմունք ցույց
տալով Հայաստանի աշխատավորուժյան գլխավոր զանգ-
վածին, գյուղացիուժյանը, Ալ. Մյասնիկյանը միաժամա-
նակ առաջադրել է աշխատավոր ինտելիգենցիայի ստեղ-
ծագործուժյան խոշոր նշանակուժյան գաղափարը. նրբա-
միտ շրջահայացուժյամբ նա ձգտել է աշխատավորուժյան
գործին ի սպաս դնել յերկրի բոլոր կենսունակ ուժերը
խաղաղ շինարարուժյան ասպարիզում:

Սակայն Հայաստանի պետական շինարարուժյունը
ամրակուռ չէր լինի, յեթե չհղացվեր Անդրկովկասյան ժո-
ղովուրդների յեղբայրական դաշինքի մեծ գաղափարը:
Ալեքսանդր Մյասնիկյանը Անդրկովկասյան Ֆեդերացիայի
ամենագործոն ստեղծողներից մեկն էր:

Հայոց պատմության դասն էր դա՛ հայ ժողովրդի
բարորդուժյունը պայմանավորված է իր դրացի ժողովուրդ-
ների բարեկեցուժյամբ, հայ աշխատավորուժյան ասպա-
ններ վոչ թե Ֆեվրոպայի գիշատիչ «մարդասերներն» են,
այլ թյուրք և վրացի պրոլետարիատն ու գյուղացիու-
ժյունը:

Ալեքսանդր Մյասնիկյանը «Անդրկովկասի ժողովուրդ-
ների յեղբայրուժյան լավագույն ջատագովն էր, նա այդ
ժողովուրդների միուժյան լավագույն կազմակերպիչներից
մեկն էր», ասում է Լուկաշինը: Ալեքսանդր Մյասնիկ-
յանը «ազգային խաղաղուժյան զրոշակակիրն էր», — ա-
սում է Սերգո Որջոնիկիձեն: Ալեքսանդր Մյասնիկյանի
նշանակուժյունն «իբրև անձնավորուժյան, Անդրկովկասի

ժողովուրդների զողման և Ֆեդերացիայի ամրացման հա-
մար ահագին էր», — ասում է Աղամալի-Ողլին:

Ալեքսանդր Մյասնիկյանի վերջին խոսքը, ավանդ—
խոսքը նվիրված է այդ զողման զաղափ ին: Իր թռիչքը
Թիֆլիսից նույն նայատակն ուներ՝ նա Աբխ յ իա էր գնում,
աբխազ աշխատավորներին ազգամիջյան համեք աշխուժյան
և աշխատավորական յեղբայրության խոսքն ասելու:

Նրա վերջին ճառն ուղղված է Բագվի բազմացեղ
պրուլետարիատին (մարտի 2-ին):

«Հայ, թյուրք, վրացի աշխատավորները պետք է ապ-
րեն կողք-կողքի, կռվեն կողք-կողքի, աշխատեն կողք-կողքի,
վորովհետև ահջատ նրանք կորստի կմատնվեն»:

Մենք միասնական անդրկովկասյան ազգ ենք, միաս-
նական ընտանիք. «Բայց դա չի նշանակում, թե մենք վերաց-
նում ենք ազգային կուլտուրան: Ամեն մի կուլտուրա զար-
գանում է առանձնակի պայմաններում. թյուրք կուլտու-
րան զարգանում է թյուրք ավանդություններով, թյուրք
անցյալով, առհասարակ թյուրքական լավագույնով: Նույնը
վերաբերում է և հայկական ու վրացական կուլտուրային»:
Յեվ այդ կուլտուրաները վոչ միայն շեն խանդարում մի-
մյանց, այլ և ոգնում են:

«Մենք շատ բան ենք արել, մենք հաղթահարել ենք ազ-
գային պատնեշները, ճիշտ է, վոչ ազգային հոգեբանու-
թյունը, բայց ապագայում մենք այդ էլ կհաղթահարենք,
մենք հավատացած ենք դրա վերաբերմամբ: Սակայն անց-
նելով այդ ուղին, մենք, իհարկե, մի շարք սխալներ ենք
գործել: Այսօր, մեր Անդրկովկասյան փառապանծ Ֆեդե-
րացիայի տարեդարձի օրը, մեզանից ամեն մեկը մի ցան-
կություն ունի—ավելի ևս ամրացնել այդ միությունը,
ամրացնել կապը անդրկովկասյան ժողովուրդների մեջ,
վորպեսզի էլ ավելի ներթափանցենք ժողովրդական մաս-
սաների խորքերը և այնպիսի հաղթանակներ տանենք,

վոր ապագա սերունդը շար զգացմունքով շնիշե մեզ, այլ
կարողանա ասել՝ «այո, յերբեմն յեղել են մարդիկ, իրենց
ժամանակի լավագույն մարդիկը»:

Այո, նա իր ժամանակի լավագույն մարդ-
կանցից էր, մեկը նրանցից, վորոնց մասին ասել ե ուս
մեծ բանաստեղծը՝

Մայր-բնություն ! Յեթե յերբեմն


Այսպիսի մարդիկ դու չուղարկեցիր աշխարհին,
կը խոպանանար կյանքի արտը...


Սակայն անհամբերող հակառակորդի յերկշուտ կեղ-
ծավորությունը միայն կարող է զատել Ալեքսանդր Մյաս-
նիկյանին իր կուսակցությունից, Վ. Ի. Լենինից և Հոկ-
տեմբերից:

Հոկտեմբերյան հեղափոխության մեծագույն նվա-
հումն է հայ ժողովրդի համար այն յեղբայրական դաշին-
քը, վոր կնքվել է անդրկովկասյան հանրապետություն-
ների մեջ, այն կապը, վոր ստեղծվել է Հայաստանի և
Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների հրա-
պայական Միության միջև:

Այդ դաշինքի, այդ կապի ամրացման գործին են վի-
ել Ալեքսանդր Մյասնիկյանն իր կյանքը:

Ալեքսանդր Մյասնիկյանը Հոկտեմբերի առաջյալն էր:







[1n]

A \bar{u}
77561

9122 5 20 40064